

ՅՈՎՆԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՎ-ԱԳԻ «ԲԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ» ՉԱՓԱԾՈՅԻ ՆՈՐ ԲՆԱԳԻՐ

Մեր խնդրոյ առարկան Սարկաւագ վարդապետի «Բան իմաստութեան ի պարճառս գրօսանաց առ ձագն որ զաղաթանոցաւ նորա ճռուելէր քաղցրաձայն, որ կոչի սարիկ» գործի՝ վարդապետի և սարեակ թոչունի չափածոյ երկ-խօսութիւն-բանավեճի բնագիրն է: Առաջին անգամ այն հրատարակել է մեծավասարակ Ն. Ղևոնդ վ. Ալիշանը¹, իր բնագրի հիմք ձեռագրի մասին յայտնելով հետեւեալը. «Աս երգը Մարտունի ազգային դպրոցին մէջ հին աղօթագրքի մը մէջ գրած էր՝ Սարկաւագին ուրիշ գործքերուն հետ մէկտեղ, որ դպրոցին մեծերը հաճեցան անցած փարիները մեզի համար օրինակել փալտ»²:

Բնագրի գնահատման առումով ելակէտային կարեւորութիւն ունի Ալիշանի հետեւեալ խօսքը. «Աս բանաստեղծութեան վրայ շար խորհրդածութիւններ կրնայինք ընել՝ յարգը աւելի ճանչցնելու մարքով, միանգամայն քանի մը պակասութիւններն ալ ցուցնելով. բայց ընթերցողաց ախորժակին և ընտրութեանը ձգելով բոլորովին աս աշխատութիւնը, հոս չենք կրնար չիշել որ աս քերթուածն ալ շէնքին ու չափերուն կողմանէ մէկ նոր ապացոյց մըն է Վիրգիլիոսի Մշակականը թարգմանչին կարծեացը. այսինքն թէ աս տեսակ ուրանաւորն է մեր բուն ազգային չափը, և ասիկա ալ պէտք է ծաղկեցնել՝ նաեւ իբրեւ աւելի ազդու և դաշնակաւոր: Աս թարգմանութեան փառաբանութիւնն ալ օրերս լսնացած ըլլալով, ընթերցասէրք անոր ընդարձակ յառաջաբանին մէջ տեղն ի տեղը կրնան տեսնել աս բանիս հիմունքն ու զանազան ապացոյցները»³:

Ալիշանի չարած «խորհրդածութիւններ»ի փոխարէն Մ. Աբեղեանը բաւական մանրակրկիտ և ծաւալուն իմաստաբանական քննութեան է ենթարկել այս չափածոն, իսկ վերջում Բազմավէպից առել և նոյնութեամբ վերափայլել է այն⁴: Աբեղեանից առաջ, օգտուելով Մեսրոպ վ. Քէշիշեանի դեռնու անփայ ցուցակից, 1925 թ. Ն. Համազասպ Ոսկեանը թուարկել է Չմմառի վանքի հին Տ^մ 195

1 Բազմավէպ, 1847, էջ 221-225. այս չափածոյի հրատարակութիւնն էլ շարժառիթ է դարձել Ալիշանի արժէքատր յոդուածի, որի ամբողջութիւնը տես Ն. Ղ. Մ., «Յովհաննէս Սարկաւագ վարդապետ».- Բազմավէպ, 1847, էջ 214-225. որոշ փոփոխութեամբ նոյն շարադրանքը տես նաեւ՝ Ն. Ղևոնդ Մ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց Նայոց, հր. Բ., Վենետիկ, 1921, էջ 248-273՝ «ԻՊ. Սալաւագ Մոփեստես»:

2 Բազմավէպ, 1847, էջ 219-220:

3 Անդ, էջ 220: Նկատի ունի՝ Պոլիսի Վիրգիլեայ Մարովնի Մշակականը, Թարգմանեալ ի չափս հայկական և համաօրոյ մեկնութեամբ բացայայտեալ ի Ն. Արսենէ Կոմիտասայ Բագրաւորունոյ, Վենետիկ, Ս. Ղազար, 1847. ուր «Յառաջաբան»ի՝ առաջին էջակալման էջ 10-32 տես ակնարկուած «հայկական» չափին վերաբերող մանրամասները (բուն թարգմանութիւնը՝ փառքեր համարակարգի էջ 1-128 և 2 չհ.):

4 Տես Մ. Աբեղեան, Յովհաննէս Սարկաւագ վարդապետ.- ՆՍՍՌ-ԳԱ Տեղեկագիր, 1944/1-2, էջ 31-60. բնագիրը՝ էջ 53-58, Մ. Աբեղեան, Նայոց հին գրականութեան պարմութիւն, Երկրորդ գիրք (10-15րդ դարեր).- Երկեր, հր. Դ., Երևան, 1970, էջ 72-82 (Սարկաւագին վերաբերող մասը՝ 63րդ էջից):

(ներկայ՝⁵ 156) ձեռագրի 136բ-139ա էջերում առկայ՝ «Յովհաննես Սարկաւագի գրութիւնք»ը, որոնց շարքում՝ նաև այս չափածոն (136բ-138ա)⁵:

Ոսկեանից այս փոփոխութիւնն առնելով և ասելով, թէ Զմմառի ձեռագրի «լուսանկարները մենք բերել ենք անցեալ րարի Լիբանանում գրնուած ժամանակ», Ա. Արքահամեանն իրագործել է այս չափածոյի ձեռագրական յաջորդ հրապարակութիւնը. «Սարեակ» րադը մենք հրապարակում ենք Ղ. Ալիշանի 1847 թուի «Բագմավէլ»ում լոյս րեսած բնագրի հիման վրայ: Նրա մէջ կարարել ենք որոշ ուղղումներ Զմմառի ընդօրինակութիւնից»⁶:

Չափածոյիս բնագրական խնդիր արծարծող յաջորդ բանասէրը հանգուցեալ Ասարուր Մնացականեանն էր⁷. նրա աշխարանքի կարեւորագոյն արդիւնքն այն է, որ պարզել է՝ «Բան իմաստութեան» չափածոն գրելիս Սարկաւագը մեծապէս օգրուել է Փիլոն Ալեքսանդրացու կամ Երրայեցու (20 թ. Ք. ա. - 40 թ. Ք. յ.) «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացոյ» գործից⁸: Այս նոր գիտելիքի հէնքի վրայ արծանագրելով, որ Սարկաւագի բնագրի և նրա մէջ արարայայրուած գաղափարների ու հայեացքների մեկնաբանութեան հարցում «Մ. Արեղեանին են հերեւել յաջորդ ժամանակների բոլոր մասնագէտները ինչպէս գրականագիտութեան, այնպէս էլ փիլիսոփայութեան, գեղագիտութեան, երաժշտագիտութեան և այլ բնագաւառներում՝ իրենց արժէքաւոր հերագօրութիւնները կարարելիս», որպէս եզրայանգում արծանագրել է. «Ըստ այսմ՝ Մ. Արեղեանի րեսութեան հիմնական կէտերի մի մասը մնում է ուժի մէջ, իսկ միւս մասը՝ ենթարկում ճշրումների կամ՝ վերանայում ամբողջապէս»⁹. այսինքն՝ թէ՛ Արեղեանը և թէ՛ նրան յաջորդած մեկնաբանները որոշակի հարցերում Սարկաւագին վերագրել են գաղափարներ, որոնք բխում են նրա օգրագործած աղբիւրից, ուստի և այդպիսի րեսակէտները վերանայելի են:

5 Տէն Ն. Ն. Ոսկեան, Յովհաննես Սարկաւագի գրութիւնները.- Նաղէա ամսօրեայ, 1925/Մայիս-Յունիս, էջ 236-7. հմմտ. Ն. Ն. Ոսկեան, Մարենագրական ընտրութիւններ, Վիեննա, 1926, էջ 43-4 (Ազգային մարենագրարան, ՃԺԲ.):

6 Ա. Գ. Արքահամեան, Յովհաննես Իմաստաւերի մարենագրութիւնը, Երեւան, 1956, էջ 102, 324. բնագիրը՝ էջ 319-324: Ալիշանի րպագրի ձեւերը նշանակել է Բ, իսկ Զմմառի ձեռագրինը՝ Ա պայմանանկիշերով: Այս գրքի 101րդ էջում Արքահամեանն ունի ուշագրաւ մի այլ հաղորդում. «Ի դէպ, «Սարեակ»-ի մի ընդօրինակութիւն, նոր գրչութեամբ, մենք րեսել ենք Երուսաղէմի Նայոց Ազգային պարբիարքարանի մարենագրարանի ձեռագրերից մէկում», ուր և յղել է՝ «Այդ ձեռագիրը գրանցուած էր Ն⁶ 1527ի րակ»: Սակայն Երուսաղէմի Ն⁶ 1527 ձեռագրի բովանդակութիւնն է՝ «Յաղագս եօթն խորիւրդոց», 1703 թ. գրուած 118 էջանոց րետր է, որ Սարկաւագի չափածոն չունի. րեն Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հր. Ե., Կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1971, էջ 276 (այսուհերեւ՝ Երուսաղէմի ցուցակ, Ե.): Երուսաղէմի րասնմէկապորեայ ձեռագրացուցակը շար ուշադիր թերթելով՝ կարողացանք պարզել, որ Արքահամեանը ձեռագրի համարը պէրք է գրել 1525 (րեն ստորեւ), որի փոխարեն «վրիպել» և գրել է 1527. սակայն այս ձեռագիրն էլ չի կարելի համարել «նոր գրչութեամբ», որովհերեւ այն 1619 թ. կանոնաւոր և հնարոյր նորգիր գրչութիւն ունի:

7 Ասարուր Մնացականեան, Յովհաննես Սարկաւագի «Բան իմաստութեան» պոեմը և նրա գեահատրութիւնը՝ ըստ օգրագործուած աղբիւրների».- Բաներ Մարենագրարանի, հր. 14, Երեւան, 1984, էջ 9-44:

8 Փիլոնի Երրայեցոյ Բանք երեք ձեւ ի լոյս ընծայեալք. Ա. Բ. Յաղագս նախախնամութեան, Գ. Յաղագս կենդանեաց, ի հին թարգմանութենէ եղելոյ ի յոյն բնագրէ, ի ձեռն սրբոց թարգմանեաց մերոց, յեղեալ ի լարին բարբառ, աշխարասիրութեամբ Մ. Սիրպիչ վ. Միխայրեան Ազերեանց, Վենեթիի, Ս. Ղազար, 1822, էջ 123-172:

9 Բաներ Մարենագրարանի, հր. 14, Երեւան, 1984, էջ 10:

Իր աշխարանքի ընթացքում Ա. Մնացականեանը նկատել է. «Ուշադիր նայելով բոլոր հրապարակություններով ներկայացրած բնագրերին, Էական տարբերություններ ենք տեսնում Ա. Աբրահամեանի կազմած քննական բնագրում՝ Ղ. Ալիշանի հրապարակած օրինակի համեմատությամբ: Եւ դա բնական է: Առկայ են կարևոր լրացումներ, վերանայումներ: Յաւօք, Ա. Աբրահամեանը թոյլ է տուել որոշ վրիպումներ, բնագիրը ճշգրտելու մասնակի սխալներ, իսկ նորայայտ օրինակի մասին չի տուել բաւարար տեղեկություններ, որոնք առաջացնում են առանձին տարակուսանքներ»¹⁰: Այսինքն «Ա. Աբրահամեանի թոյլ տուած բնագրագիրական որոշ վրիպումներ նկատուած եւ ուղղուած են վերջին վերահրապարակութեան մէջ: Այսպէս էլ, սակայն, տեղ են գտել մասնակի վրիպումներ»¹¹. Ի վերջոյ՝ «մեր առջեւ բարձրացաւ Զմմառում եղած ընդօրինակութեան նոր օրինակ ստանալու»¹² եւ քննական բնագիր կազմելու խնդիրը: Այժմ մենք առաջնորդուում ենք այդ նոր բնագրով»¹³:

Առաւել քան յայտն է, որ հմուտ բանասէր Ա. Մնացականեանը Զմմառի ձեռագրի համապատասխան հապուածի՝ Սահակ վ. Քէշիշեանից ստացած ընդօրինակությունն օգտագործելով՝ կազմել է «Սարեակ»ի նոր «քննական բնագիր», որից միայն քաղուածքներ է արել այսպէս արժարժուող իր քննութեան մէջ եւ որը, սակայն հրապարակել չի հասցրել¹⁴: Իսկ այս կացութիւնը նշանակում է, որ «Բան իմաստութեան» չափածոյի ճշգրտուած բնագրի պատրաստութեան խնդիրը շարունակում է լինել Սարկաւագի մատենագրական ժառանգութեան քննութեան օրակարգային հարցերից մէկը: Ըստ այսմ խնդրեցինք եւ ստացանք տաղի մեզ յայտնի բոլոր երեք ձեռագրերի պատճենները¹⁵ եւ նրանց հիման վրայ պատրաստեցինք Սարկաւագի այս արժէքաւոր չափածոյի նոր բնագիր, համեմատելով նաեւ Ալիշանի եւ Ա. Աբրահամեանի տպագիրները:

10 Անդ, էջ 11. եւ նշել է տարակուսական երկու փաստ:

11 Նկատի ունի հետեւեալը՝ Նայոց հին եւ միջնադարեան բանաստեղծութեան քրտաբանութիւն, Կազմեցին Ա. Մարտիան, Գ. Անանեան, Երեւան, 1979, էջ 79-85. (էջ 11՝ նշել է «քրտաբանութիւն»-ի մէջ թիւքմանացաբար առաջացած մի սխալ՝ «անհամբար» - անշտեմարան բառը տպուել է՝ «անհամբեր»):

12 Այս առիթով շնորհակալութիւն է «յայտնում գեղաստարի Ս. Քէշիշեանին, որն ընդօրինակեց եւ մեզ ուղարկեց նշուած բնագիրը»՝ Բանբեր Մատենադարանի, հր. 14, Երեւան, 1984, էջ 12, ծ. 14:

13 Բանբեր Մատենադարանի, հր. 14, Երեւան, 1984, էջ 11-12:

14 Մատենադարանի գիրական նստաշրջանում այս յօդուածը որպէս գեղուցում կարդացել է 1980 թ. նոյեմբերի 13ին (էջ 9). սա նաեւ նրա կեանքի օրօք պատրաստուած վերջին հրապարակումն է, որովհետեւ Մատենադարանի Բանբերի՝ «պտորագրուած է տպագրութեան 12. 07. 1984 թ.» մակագրութիւն ունեցող այս 14րդ հատորը չտեսած վախճանուեց 1983 թ. յունիսի 27ին: «Սարեակ»ի նրա պատրաստած նոր բնագիրը հաւանաբար պէտք է լինի իր թողօնի մէջ, սակայն վերջինս թէկուզ եւ վաղուց ի վեր Մատենադարանի արխիւային բաժնում է, բայց մնում է չմշակուած, ուստի անհնար է իմանալ, թէ ինչ կայ կամ չկայ այդ թողօնում:

15 Երախտագրութեամբ արձանագրում ենք, որ, շար այլ նիւթերի շարքում, Երուսաղէմի եւ Վենետիկի ձեռագրերի պատճենները մեզ համար պատրաստել է մեր լուսանկարիչ բարեկամ Նայր-Բազէ Խաչերեանը, արքունութեամբ Երուսաղէմի հայոց պատրիարք Նուրիան արքեպս. Մանուկեանի եւ Մխիթարեան միաբանութեան ընդհանրական արքեպսար Եղիա ծ. վ. Քիլադպետին: Իսկ Զմմառի ձեռագրի պատճենը նոյնպիսի շնորհակալութեամբ ստացել ենք նոյն վանքի միաբան եւ վանական վարչութեան քարտուղար Ն. Մովսէս վ. Տօհանեանից:

Այսպիսով, «Բան իմաստութեան» չափածոյի մեզ յայտնի եւ այսպէս օգտագործուած ձեռագրերն են.

Ա.¹⁶ Մխիթարեանց Վենետիկի ձեռ. 213/1205.¹⁷ Աղօթագիրք ԺԴ. եւ Նաւարումն բանից նախնեաց. 1844 թ., Մարգուան, Պրուսա, Արմաշ, Գաղապիա, Եղոկիա, Սեբաստիա, գրիչ եւ սրացող՝ Ներսէս վ. Սարգիսեան: 102 էջ (=51 թերթ), թուղթ, 22,5x17,5. միասին, շղագիր, 34 փող¹⁸: Մեր բնագիրն զբաղեցնում է այս ձեռագրի 47-52 էջերը. 58-66րդ էջերը բաց են՝ չգրուած, 67-րդ եւ յաջորդ էջերում առկայ բնագրերը Պրուսայի ձեռագրերից են, իսկ մինչ այդ՝ Մարգուանում օրինակած բնագրերն են, որոնց վերջում գրել է. «Քառասունութեց գլուխք բանիցս գաղափարեցան ի Մարգուան, ի դպրապան հայոց, ի Սեպար. 26, 1844, ի բոլորգիր անթուական օրինակէ Աղօթագրոց, որոյ ի կարարածին կայր եւ քաղումս ի Մաշտոցէ» (էջ 57)¹⁹: Նոյնն է հասարարում նաեւ Ն. վ. Սարգիսեանի ուղեւորութեան հետագօտողը՝ «Մարգուանի եւ Ամասիոյ եկեղեցիներուն մէջ կը փնտրեն հարիւրաւոր գրչագիրներ, մեծ մասով Ճաշոց, Մաշտոց, Յայսմաւորք եւ Աւերաբան: Մարգուանի ձեռագիրներուն մէջ նորութիւն էր Աղօթագիրք մը, որ իսկոյն «գամենայն նորագիւրս գաղափարեցաք անպի, թուով աւելի քան զքառասուն». վերջին քաղումաձքի աղբիւրը նամակ է՝ «Սարգիսեան Ն. Ն. Ամասիայէն, Նոյսր. 1844ին, առ Ն. Գեորգ Նիրմուզեան, Պոլիս»²⁰: Ըստ այսմ իմացանք, որ Ալիշանի փալագրի հիմք ձեռագիրը Ներսէս վ. Սարգիսեանը 1844 թ. օրինակել է Մարգուանի դպրոցում գտնուած անթուական բոլորգիր մի Աղօթագրքից²¹, որի գրչութեան վայրն անյայտ է, իսկ ժամանակը՝ անորոշ. նկարի ունենալով որ գրչութիւնը բոլորգիր է եղել, կարելի է սոսկ ենթադրել, որ այն կարող էր գրուած լինել ԺԴ.-ԺԵ. դդ. ընթացքում:

16 Կարգային այս եւ միւս՝ Բ. եւ Գ. համարները նաեւ մեր համեմատութիւնների պայմանաւնիշերն են:

17 Կուրորակի առաջին համարը ձեռագրի գոյրահամարն է, երկրորդը՝ ցուցակինը:

18 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հարոր Զ. Պարսպագիրք Նայոց - Կանոնագիրք, Գրիգոր Նարեկացի - Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի - Աղօթագիրք, Յօրինեց Ն. Սահակ վ. Ճեմճեմեան, Վենետիկ - Ս. Ղազար, 1996, էջ 1119-1126:

19 Այս՝ Ն⁶⁶ 213/1205 ձեռագրի 1-57 էջերում կայ ընդամենը 23 միատր նիւթ (Մարկապահին են միայն 6ը). ենթադրելի է, որ Մարգուանի Աղօթագրքից առած մնացեալ միատրներն ա՛յլ կազմի մէջ՝ Մխիթարեան մատենադարանում գրանցուած են մի ա՛յլ համարի ներքոյ: Այս ձեռագրի Պնպ. Աբ. Էջին կայ փալագիր մի պիւրակ, որի վրայ կարդում ենք. «Ուղեւորութիւն Ն. Ներսէսի եւ Ն. Գրիգորի ի Նայս, թիւ 25»:

20 Ն. Սահակ Ճեմճեմեան, Ն. Ներսէս Սարգիսեանի ուղեւորութիւնը դէպի Փոքր եւ Մեծ Նայք (1843-1853), Վենետիկ, 1974, էջ 20 (նաեւ՝ ծ. 50): Ն. վ. Սարգիսեանին իր յայտնի գրքի («Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Նայս Ն. Ներսիսի Սարգիսեան Մխիթարեան վարդապետի», Վենետիկ, ի փալարանի Սրբոյն Ղազարու, 1864-ՌՅԺԳ.) պատկան փեղում (էջ 53-4) ձեռագրի եւ Մարգուանի դպրոցի մասին որեւէ խօսք չունի:

21 Նրա ուղեւորութեան հիմնական նպատակներից մէկն արժէքատր ձեռագրերի եւ բնագրերի ձեռքբերումն էր. եւ այս ձեռագրի օրինակումն այդ նպատակի մի դրսեւորում էր, ըստ այսմ՝ աւելի շար «ոճ» է Ալիշանի վերաբերեալ խօսքը՝ «դպրոցին մեծերը հաճեցան անցած փաթիկները մեզի համար օրինակել փայտ», ուստի եւ լիովին անհարկի է այդ խօսքի հետեւեալ վերաիմաստաւորում-վերածեսակերպումը. «Յովհաննէսի այս փաղը պահել է Մարգուանի դպրոցի մատենադարանի մի ձեռագիր աղօթագիրքը: Տաղի փնթալը, դպրոցի վարչութեան յանձնարարութեամբ, արարագրուել եւ ուղարկուել է Վենետիկի Մխիթարեաններին, որ եւ Ն. Ղ. Ալիշանի կողմից հրատարակուել է 1847 թուին «Բազմավեպ»ում» (Ա. Աբրահամեան, նշ. աշխ., էջ 101): Այս ճշգրտումը կարեւոր ենք համարում՝ շեշտած լինելու համար, որ Մարկապա վարդապետի «Բան իմաստութեան» չափածոյի այս փաթեթակի փրկութիւնը Ներսէս վ. Սարգիսեանի մեծ վատրակի միայն մի դրսեւորումն է:

Նարկ է արձանագրել այս ձեռագրի և նրանից Ալիշանի արած առաջին փայագրի մի էական փարբերություն. փայագիրն ունի գաղտնավանկի բազմաթիվ «ը» գրեր, որոնք ձեռագրում չկան. այսինքն՝ Ալիշանը, ըստ իր ժամանակի սկզբունքի՝ առանց փեղեկացնելու, ձեռագրական պարկերից շեղուել է սոսկ բանաստեղծական կշռոյթը յստակ պարկերելու նպատակով²²: Ձեռագրում միայն այս գործի զբաղեցրած էջերում (47-52) կան բանաստեղծական փողերն իրարից զատող՝ սեւ մատիկով արուած փողափոխի ուղղահայեաց գծեր՝ |. պերք է ենթադրել, որ սրանք գծուած են Ալիշանի ձեռքով:

Բ. Զմմաթի վանքի ձեռ. Շ^մ 156. Նաւաբաձոյ, ԺԷ. դար, 258 թերթ, թուղթ, 21x15,4. միասին, նոսրգիր, 29 փող: 136բ-139ա էջերի պարունակությունը բնորոշուած է՝ «Յովհաննէս Սարկաւագ վարդապետի գրութիւնք», որոնց մէջ առաջինը մեր բնագիրն է՝ 136բ-8ա (կարգային համարը՝ ԻԹ.), որ, սակայն, այստեղ թերի է և աւարտում է «զի վարժումն և կրթութիւն ոչ ժամանէ մերձ առ բնութիւն» փողով, այսինքն՝ վերջի 61 փողը չունի²³: Այս ձեռագրում ենթակայական դերբայի «-ող» վերջածանցը գրերէ միշտ գրուած է «-օղ» ձեռով. ընթերցումների շարքում այսպիսիք չենք գրել:

Գ. Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի մատենադարանի ձեռ. Շ^մ 1525. Աղօթագիրք, ՌԿԼ. - 1619 թ, Լուցբայ (Լեհաստան), գրիչը՝ Աստուածատուր քիյ. և Սիմէոն երէց: 682 էջ (=341 թերթ), 15,5x10x5. նոսրգիր (էջ 1-376) և բոլորգիր (էջ 477-682), 19 փող²⁴: Մեր բնագիրը նոսրգիր մասում է՝ էջ 175-86. այս ձեռագիրն էլ պակասատուր է սկզբից. 174-րդ էջի ստ. լս-ում մատիկով, շղագրով գրուած է. «ինկած երկու թերթ», 175-րդ էջի արտաքին լս-ում նոյն ձեռքով և նոյն մատիկով՝ «Առ ձագն սարեկ փող 17». այս «17»ը Ալիշանի փայագրութեան փողահամարն է (խորագիրը չհաշուելով), սկսում է մեր բնագրի 20րդ փողի վերջին բառով՝ «[խանդաղա]փող և ողբերգակ, | հրամայող և ողորդող, զխրատականս ներադրող»²⁵:

Պարունակած բնագրերի առումով այս ձեռագրերի ընդհանրական առաջին յարկանիշն այն է, որ երեքի մէջ էլ աւելի կամ պակաս քանակով կան մեր հեղինակի նաեւ աղօթքներ: Այսպէս. Վենետիկի (Ա.) ձեռագիրն ունի երեք աղօթք (էջ 17-26), ապա՝ «Բան իմաստութեան»ը (էջ 47-52) և կրկին երկու աղօթք (էջ 52-57). Զմմաթինը (Բ.)՝ «Բան իմաստութեան»ը (136բ-8ա), ապա՝ երեք աղօթք (138ա-9ա). աւելի ուշագրաւը Երուսաղէմինն է (Գ.), որ նախ ունի փասնութեան²⁶

22 Ալիշանի օգտագործած ձեռագրեր վերահամեմատելու այլ առիթներ եւս ունեցել ենք. այստեղ եւս նկատում ենք նախորդ դէպքերում փետնուած օրինաչափությունները. որոշ դէպքերում նա այս՝ Ա ձեռագրի ձեռքը չի նկատել (գուցէ՛ շրապելով), մի այլ մասն էլ անկարելու է համարել (ի վերջոյ՝ նրա ժամանակ մեր օրերի բնագրագիրական սկզբունքները չկային):

23 Տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմաթի վանքի մատենադարանին, Կազմեց Մեսրոպ Վրդ. Քէշիշեան՝ միաբան Զմմաթի, Վիեննա, 1964, էջ 345 (ամբողջ նկարագրությունը՝ էջ 337-353):

24 Երուսաղէմի ցուցակ, Ե., էջ 272 (ամբողջ նկարագրությունը՝ էջ 272-274):

25 Այս ձեռագրի պատճենն ստացել և համեմատել ենք ամենավերջում. և նշանակել ենք սրա բառական քիչ ընթերցումներ, այսինքն՝ իմնականում համընթաց է բուն շարադրանքին:

26 Յուցակում (Երուսաղէմի ցուցակ, Ե., էջ 272) այս 18ից նկարագրուած է միայն եօթը:

չափածոյի նախադասութիւն-միաորդը եւս դիպում ենք արձակի նման մի խօսք, որ պէտք է սկսուի գլխաւորապէս և ասարկութիւն վերջակէտով, ուստի եւ բանաստեղծական միջանկեալ փոփոխութիւն մեծ գրումը սկզբնաւորապէս համարում ենք ընթերցում-ընկալումը դժուարացնող բան. փոփոխութիւնը պարզապէս արդէն ապահովում է բնագրի չափածոյ լինելն զգալը, այդպէս ընկալելը եւ կշռոյթով ընթերցել-վերարարարելը:

Բնական է, որ որեւէ բնագրի ամէն նոր հրատարակութիւն ունի մեկնաբանման նոր՝ նախորդից փոքրեր փոքրեր. այսուհանդերձ, «Բան իմաստութեան» չափածոյի սոսկական վերահրատարակութիւններն անսխալաբար, համեմատել ենք միայն ձեռագրական հիմք ունեցող երկուսը՝ Ալիշանի առաջին փայլագիրը եւ Ա. Աբրահամեանինը, որի մէջ գործածուած է երկրորդ՝ Զմառի ձեռագիրը: Միաժամանակ, միայն կէտադրութիւնը ճշգրտելու համար եւ առանց վրիպակներն ու պարահական փոփոխութիւնները նշելու համեմատել ենք Ալիշանի փայլագրից Աբեղեանի³⁰, նաեւ՝ Աբրահամեանի հրատարակութիւնից Ա. Մաղոյեանի արած վերափոխութիւնները³¹. Նոյն նպատակով եւ նոյն կերպ թողութիւն համեմատել ենք նաեւ «Բան իմաստութեան» չափածոյի՝ Ա. Մնացականեանի արեւելահայերէն³² եւ Զուլալ Գազանճեանի արեւմտահայերէն³³ փոխադրութիւնները:

Մեր բնագրի պայմանանիշները եւ համապարասխան ձեռագրերն ու փայլագիրներն են՝

Ա - Մխիթարեանց Վենետիկի մատենադարանի ձեռ. ՇՊ 213/1205, էջ 47-52.

Բ - Զմառի վանքի մատենադարանի ձեռ. ՇՊ 156, էջ 136բ-8ա.

Գ - Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի մատենադարանի ձեռ. ՇՊ 1525. էջ 175-86.

Տ₁ - Ալիշան, Բազմալէլ, 1847, էջ 221-225 - ձեռագրում գոյութիւն չունեցող -ը գաղտնավանկի առարկ մոծումներ է արել.

Տ₂ - Ա. Աբրահամեան, Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, Երեւան, 1956, էջ 319-324.

Մ - Ա. Մնացականեանի կազմած անտիպ բնագրի իր իսկ քաղուածքների³⁴ ձեւերը:

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

³⁰ Տէն ասոր, ծնթ. 4:

³¹ Տէն Ա. Մաղոյեան, Գ. Անանեան, Հայոց հին եւ միջնադարեան բանաստեղծութեան քրեատմարիա, էջ 79-85:

³² Յովհաննէս Մարկոսեան գիտնական վարդապետի ասած Բան իմաստութեան՝ մտադրութեան համար. - «Գարուն» ամսագիր, Երեւան, 1982, ՇՊ 10, էջ 81-86 (նախաբան, արեւելահայերէն թարգմանութիւն եւ ծանօթագրութիւններ Ա. Մնացականեանի):

³³ Զուլալ Գազանճեան, Հարցնալիքի հայ հին բանաստեղծութեան, հարցը Ա. Վենետիկ - Ս. Ղազար, 1995, էջ 459-475՝ անգոյգ էջերին. էջ 458-474 գոյգ էջերին Ալիշանի փայլագրից առած գրաբար բնագիրն է:

³⁴ Նման. Բաները Մատենադարանի, հր. 14, Երեւան, 1984, էջ 9-44:

ՅՈՎՀԱՆՆՈՒ՝¹ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ՝² ԱՍԱՅԵԱԼ ԲԱՆ
ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ Ի ՊԱՏՃԱՌՍ ԶԲԱԻՍԱՆԱՑ

ԱՌ ԶԱԳՆ ՈՐ ԶԱՂԱԻԹԱՆՈՅԱԻ ՆՈՐԱ ՃՌՈՒԵՂԵՐ՝³
ՔԱՂՅՐԱԶԱՅՆ, ՈՐ ԿՈԶԻ ՍԱՐԻԿ՝⁴

Արթուն եւ զուարթուն, թռչո՛ւն հսկո՛ղ եւ բարբառող⁵,
անտառասէր⁶, միայնակեաց եւ ձեռնընդել համբուրասէր⁷,
կանչող եւ կարկաչող, ճռռող⁸ ձայնող⁹ եւ¹⁰ պաշտաւնասէր,
արդ, ե՛կ ինձ մերձ՝ ի գովութիւն, զի արարչին փառք մեծասցին,
մեծն¹¹ ի փոքուդ քարոզեսցի, եւ քաջարուեստն¹² ծանխցի:
Ազգաւ թռչուն մեզ թեւաւոր, ի ջուրց բղխեալ ընդ հոմասեռս,
բայց տեսակաւ դու անջատեալ ընդ փանաքիս եւ աննշանս,
ի նոյնսդ յամրաշարժ, եւ զի¹³ գեղով անվայելուչ,
ըստ հասակի յոյժ անարգիկ եւ յաւդայինս վերջադասեալ:
Աղքատ եւ անհամբար, ընդ այլսն եւ դու ես կոչեցեալ,
անհոգ եւ անարար¹⁴, որպէս ուսաք ի Քրիստոս,
այլ ըստ անձին ես քաջավարժ՝ բոլոր մասամբ անձնականաւդ,
խոհմ եւ ողջախոհ, իրաւացի եւ քաջասիրտ:
Իսկ արուեստիւ դու երաժիշտ՝ ամենահնար, անվարդապետ,
ինքնաբաւ եւ¹⁵ ինքնուսուժն, վայրաբնակ եւ անքաղաք,
անմերձ եւ մաւտաւոր¹⁶, ուրախարար լսասիրաց,
քաղցրաձայն դաշնակաւոր՝ որպէս կարծեմ ըստ արուեստին¹⁷:

1 Ա նորին յովհաննու (սարկաւագի)՝ փականգծիւնը պողպատի, այլ ձեռքով, $S_1S_2 >$ նորին, S_1S_2 յովհաննու սարկաւագի (Ա ձեռագրում «նորին» բառի գոյութիւնը պայմանաւորուած է նրա զաղափար օրինակի մէջ նախորդ նիւթի՝ նոյն հեղինակիւնը լինելով, ուստի մենք եւս բնագրի մէջ չառանք)

2 Բ յօհաննու սուրբ վարդապետին] յովհաննու... եւ վարդապետի

3 Բ ճովողէր, S_2 ճռռողէր

4 Բ S_2 սարեկ

5 Բ հսկող եւ բարբառող (Բ՝ ենթակայական դերբայի վերջատւորութիւնը միշտ -ող է, այլեւս չենք նշել)

6 S_2 անդառասէր

7 Ա $S_1 >$ անբարասէր... համբուրասէր

8 S_1 ճռռռող

9 Բ S_2 ճռռող ձայնիւ (S_1 ձայնող)

10 Բ $S_1S_2 >$ եւ

11 Ա մեծին

12 S_2 քաջ արուեստիւ

13 Ա $S_1 >$ զի

14 Բ անարար

15 $S_1 >$ եւ

16 Բ S_2 մերձատր] մօքատր

17 Բ S_2 արուեստիւ

Սաստկախաւս եւ հարթավանկ¹⁸, խանդաղատող¹⁹ եւ ողբերգակ,
հրամայող եւ ողորդող, զխրատականս ներադրող,
սպառնացող եւ հեզախաւս, գգուող²⁰, կոչող եւ հրաժարող,
կականող եւ ձայնարկու, յոյժ խնդացող եւ զուարճացեալ:
Արդ, գիշերն²¹ քեզ ի տիւ, եւ խաւարն որպէս զլոյս.
տքնասէր մշտապաշտաւն՝ ըստ²² անմարմնոցն սարասի,
յաւժարախորժ յաշխատութիւն եւ վաստակաւքն հանգուցեալ,
պիտոյիւք սղագունիւք՝ իբր անճաշակ մարմին լցեալ:
Նուազաւքն կերակրեալ՝ որպէս ունող զայն զաւրուութիւն,
պարապեալ միայն երգոց՝ ընդ գերակայսն կենդանիս,
անգիր աւրէնք եւ միանձանց եւ կշտամբիչ հեղգացելոց,
ո՛չ միով, այլ յովովիւք, որպէս տեսաք ի նախ երգեալսդ:
Ո՛վ պարող դու անձանձիր եւ կաքաւիչ յոգնանուագ²³,
աննշան երեւելի եւ անպատիւ փառաւորեալ.
սքանչելի ի քեզ խորհուրդ, որով²⁴ ընտրեաց Տէր յաշխարհէ,
բայց չառեր դու զաւրուութիւն, որով դիւրաւ խաւսին լեզուք:
Ո՛չ մտեր ի վերնատունն՝ ընդ հրաւիրեալսն յաւետիսն.
արդ, ուստի՞²⁵ քեզ խաւսելդ²⁶ յայլալեզուս եւ յընտանիս,
ե՛կ, ուստ՝²⁷ ինձ, զի ծանեայց²⁸ կիսակատար իմաստակիս,
մի՛ պատճառեր զանբանութիւն, դո՛ւ՝ յաւղաձայնդ վերծանող,
անյաւդ ձայնիւ վարդապետեա՛, եւ ստացիր զիս աշակերտ,
զի հատուցից քեզ փոխարէն՝ ընդ ուսելոյ իմաստութեանն²⁹:
Արձակեալ քեզ ներբողեան, թողից զկնի անապական,
առ հանդերձեալն ժամանակ անջնջելի քաջայարմար,
յորդորականս եւ վայելուչս, յորմէ աւգտին իմաստնացեալքն³⁰:

ԶԱԳՆ ՊԱՏԱՍԽԱՆԷ.

Ահա լուայ եւ գիտացի, զոր իմացար եւ խաւսեցար,
այժմ հրամայես եւ մեզ պատմել՝ ըստ որում³¹ ունիս ի քեզ իմաստս,

18 Բ հարթավանգ

19 Գ ///րող (Գ՝ ունի աշարեղից սկսած)

20 ԲԳՏ₁ գրգուող

21 Բ գիշերըն

22 ԲՏ₂ > ըստ

23 Գ յոքնաւուագ, Տ₁ յոքնաւուագ

24 Տ₁Տ₂Մ որոց, Տ₁ ծնթ.՝ «յորինասկին որով. զատարեւոցն ակնաւրկէ»

25 ԱԳՏ₁Տ₂ հցէ] Է (Բ Է)

26 Մ խօսել (վրէ՛պ)

27 Գ ուսոյ

28 Գ ծանեաց

29 Գ իմաստութեան

30 Տ₁ իմաստնացեալք

31 Բ սորորում, Տ₁Տ₂ նր որում] ըստ որում

ըստ այսպիսում յեղանակի, որպէս³² ասել դայ ի կարգի,
անխոտոր եւ անսայթաք, թէպէտ եւ³³ անբաւ է զոր թողում:
Ո՛չ մեղայ, ո՛չ մահացայ, ո՛չ կորուսի՝ զոր ընկալայ,
զաւանդն պահեցի, եւ տուգանաց³⁴ ոչ զգացայ³⁵.
Հշինեցի ես աշտարակ, զի յոգնակի³⁶ դարձեալ մեղայց,
կամ ընկալայց զպատուհաս՝ նմանապէս բանաւորացդ.
միոյ շրթան եւ բարբառոյ բազմատեսակ բաժանելոյ,
զչար կամացն միութիւն այնու ի բաց անջատելոյ:
Զի եւ բազմացն է միութիւն՝ նմանապէս պարսաւելի,
փոխադարձի³⁷ յոչ բնաւոր ըստ մեղանացն շահեցման.
արդ, կացի ի բնականին, որոյ պարգեւն է յայտնութիւն,
որ ի լրման ժամանակաց ընծայեցաւ փոքու հաւտին:
Ընձեռեցաւ նոցա բազում, զի կոչեցին բազումքն ի մին³⁸,
զոր միովն կորուսին՝ հակառակաւն³⁹ շահեցին.
որպէս եւ այլ տնտեսականքն, որով կեցաք ի մահուանէ,
զմեզ նորոգեցին ընդդիմակաւք⁴⁰ սխալանացն⁴¹:

ԻՐԱԽԱՅՈՒՑԱՆԷ ՎԱՐԴԱՊԵՏՆ⁴² ԶԴԻՄԱԴՐՈՒԹԻԻՆ
ԶԱԳՈՒՆ ԵՒ ԱՌԵՈՒ ՈՃ⁴³ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ.

Զայս ասաց պատճառ բազմանուագ եղանակացն՝
թռչունն քաղցրախաւս՝ ի հարցանելն մեր զնա.
«Թէպէտ բազմացն միութիւն, թէպէտ միոյն տարբերութիւն,
բնականին ի բաց դրութիւն՝ վասն սղալման առ վեհագոյնսն,
նմանապէս են պատուհասք⁴⁴, որպէս գիտեմք ի բնութենէ:
Ուսայ ես դեգերմամբ եւս՝ ի բազմաց ամաց հետէ,
զի տքնեցայ զաւր ամենայն եւ զգիշերն բովանդակ՝
առ իմաստս ցանկութեան⁴⁵, նա եւ սիրովն որ⁴⁶ առ հանճար»:
Զայս ասաց եւ հաստատեաց, որպէս կնիք իւրոցն իրաց,

32 ԱԳՏ₁Տ₂ որ] որպէս

33 ԲՏ₁Տ₂ > եւ (ԱԳ-թեպէր եւ)

34 Բ սրունգանաց] սրունգանաց

35 ԲՄ ըզգացի

36 ԱԳ յոքնակի

37 Տ₁Մ փոխադարձիչ, Տ₂ փոխադարձել

38 ԲՏ₂ մի

39 ԲՏ₂Մ հակառակօրէն

40 Գ ընդիակօք

41 ԲՏ₂ ըզմէրս որոգայթից ընդդիմակօք ըսխալանաց (Տ₂ սքխալանացն)] զմեզ... սխալանացն (Ա ընդիմակօք)

42 Տ₂ վարպէրն

43 ԲՏ₂ առնան] ոճ

44 ԱԳՏ₁ պարտիսս

45 Ա ցանկութեան, Տ₁ ցանկութեամբ, Մ ցանկութեամբ (ԲԳՏ₂ ցանկութեան)

46 Գ սիրով նոր] սիրովն որ

յանդիմանեաց զմեզ ուղիղ, եւ ինքն աւդովն սլացաւ,
 ի բարձրութիւն ոստոյն նստաւ՝ զհայրենին բարբառելով,
 աղաղակաւ զիս ձանձրացոյց. եւ չաւգտեցայ⁴⁷ ի խոկմանէն:
 Տրտմեցայ եւ զուարճացայ՝ ի մէջ երկուցն պաշարեալ,
 յանուանէ զնա կոչեցի եւ խաւսեցայ դատաստանաւ,
 հարցի եւ քննեցի, եւ պարտեցայ ի յաղթութեանն⁴⁸:
 Ասացի ընդ անմեղին, որ ճարտարէր առ իս բանիւ,
 գաղտնեաւք ներհակ ձայնիւ ջանայր յաղթել ինձ ի մարտին,
 ասեմ. Ընդէ՞ր դու զիս նեղես՝ զխորհեցողս իմաստութեան,
 ուշի մտացս իմոցս⁴⁹ յաղթես, անդլակի⁵⁰ ճոճողութեամբե՞⁵¹,
 խորհրդոցս այլալուծեամբ զդեգերանս անշահ առնես⁵²,
 զհայեցողածս բաժանես⁵³, լնուս զականջս խռովութեամբ⁵⁴,
 ընդ որս եւ միտքս⁵⁵ արտաբերին, ոչ յամելով առ իս ինքեան,
 վազեն արտաքս իբրեւ ընդ ծերպս, եւ բնաւ արգել ոչ ունելով:
 Ի գիւտն քո փութամ, եւ զգտեալն⁵⁶ մոռանամ,
 ի շահաւէտ ճառից զրկիմ, առ ի շահել զոչ ճահելիդ⁵⁷.
 յանապատի աստ գամ նստիմ, զի աւգտեցայց հանդարտութեամբ.
 ասացից եւ իմացայց, եւ⁵⁸ մի՛ եղէց ընդվայրատանջ,
 աշխատեցայց անշահաբար, ունայնատուր⁵⁹ աստաղդութեամբ⁶⁰,
 բազմադիմի վնասուն ձգմամբ, որ հանդիպի ի մէջ մարդկան:
 Դու նեղես զիս անձանձիր՝ որպէս գտեալ յինէն վնաս.
 դատախազես աղաղակաւ⁶¹ որպէս աւրէն⁶² է զրկելոց,
 ատենաբար⁶³ առ դատաւորն սաստիկ զինէն ամբաստանես,
 կամ թէ կարծես զիս թշնամի՝ աւտարապէս քեզ մարտուցեալ:
 Զորմէ սիրեմդ՝ տրտնջեմ, զի աստ կրեցի՝ զոր ասացիդ.

47 ԱԳ չօկրեցայ (ԲՏ₁Տ₂ չօկրեցայ)

48 Գ յաղթութեան

49 Բ ուշ ի միտքս իմոց, ԳՏ₁Տ₂ իմոց

50 Գ անդլակ

51 ԲՏ₂ ճոճողութեամբ, Տ₁ ժոճողութեամբ52 ԲՏ₂ ~ առնես անշահ53 ԲՏ₂ > զհայեցողածս բաժանես54 ԲՏ₂ խռովութեամբ + զմիտքս ցրուես (Տ₂ ցրութս) ունայնութեամբ55 ԲՏ₂ վասն որոյ սիրարքս (Տ₂ սիրարքս)] ընդ որս եւ միտքս56 ԱԳ զգրեալն, Տ₁ ըզգրեալն, ԲՏ₂ ըզգրեալն57 ԲՏ₂ շահելիդ] ճահելիդ58 Տ₁Մ զի] եւ59 ԲՏ₂ անշահութեամբ ունայնատուր] անշահաբար ունայնատուր, Մ ունայնատուր60 Ա //թ՛ք] ասպանողութեամբ, Գ ասպանութեամբ, Տ₁ [իմաստութեամբ (Տ₁ ծնթ. յօրինակին խանգարեալ է բառը), Տ₂ իմաստութեամբ61 ԲՏ₂ աղաղակես62 ԲՏ₂Մ օրէնն

63 Բ աստենաբար

նա եւ այսու եւս աշխատիմ, զի մուրհակաւ ամբաստանեմ⁶⁴,
յոլով ժամս պարապեալ, ի գրով ձեռին գքէն տրտունջ,
զկարեւորսն մոռացեալ, որով ապրէ⁶⁵ անձն եւ⁶⁶ մարմին,
զմերձն⁶⁷ առ նոյնս խափանեալ, որով լինի իմաստնանալ,
զուգիւ⁶⁸ մեծաց եւ անուանեաց, նա եւ վերին իսկ զաւրութեանցն:
Արդ, ես ոչ երբեք ծանեայ զիս վարեցեալ՝ յորս ասացիդ,
բայց աւելեալ ամբաստանեմ, զի ծանիցի ոսոխութիւնն⁶⁹,
որպէս սովոր են զայս առնել՝ որ⁷⁰ յատենի են դատեցեալք⁷¹,
զի բանքն⁷² զաւրասցին եւ մարթասցեն առնուլ աւճան:

ՎԱՍՆ ԼԵՇԿԵՒՆ⁷³ ՈՐ ԹԱՆԱՔՆ Ի ՎԵՐԱՅ ՎԱԹԵՅԱԻ⁷⁴

Այլ եւ⁷⁵ զայժմուս իսկ պատահումն ո՛չ լռեցից արտաբերել.
զնախահաւրն փոխազգեստն⁷⁶, որ յետ յանցմանն ընձեռեցաւ,
ապացոյց մեռելութեանն⁷⁷ եւ գուշակիչ ունակութեան՝
զվերարկուս ինձ համուռնակ զայս արարեր⁷⁸ դու անպիտան,
զի ի քո բանս⁷⁹ անդ զբաղմամբ, ներկեալ⁸⁰ սաստիկ այս մեղանաւ:
Բայց ասա՝⁸¹ ինձ գիտակաւ, զոր հարցանեմ խորհրդիւ,
զի թէ պարտ է⁸² դատախազն⁸³ դատեցելոյն չապաբանել,
թէ ազգակից⁸⁴ ես սոխակի, ասպուճակի⁸⁵ կամ ճպռան⁸⁶,
ընդէ՞ր չունիս դու քեզ կայան յանապատի՝ որպէս նոքայն:

64 ԲՄ ամբաստանիմ

65 ԲՏ₂ ապրի

66 Մ ու] եւ (վրէպ)

67 ԲՏ₂ ըզմերձս

68 Տ₁Տ₂Մ գուգել

69 ԲԳՏ₂ ոսոխութիւն

70 Գ > որ

71 ԱԳՏ₁ դասեցեալք, ԲՏ₂ դարեցեալ, Տ₁ ծնթ. «գուցէ դարեցեալք»

72 Տ₂ բանքն եւ

73 Տ₁ ծնթ. «զեշկումաշկ վերարկու մաշկեայ»

74 ԲՏ₂ վասն մաշկելին, յորոյ (Տ₂ որոյ) վերայ թանաքն վայթեցաւ (Տ₂ վաթեցաւ)] վասն լեշկէին որ թանաքն
ի վերայ վաթեցաւ

75 Տ₂ > եւ

76 Ա փոխասցեստն, Գ փոխասցեստն

77 Գ մեռելութեան

78 Մ արարեալ

79 Տ₁ Մ բանսդ

80 Բ ներկալ

81 Գ ասայ

82 Բ պարկան առ] պարք է՝Գ

83 Տ₁ զի թեպէր [ըզդարա]խազն, Ա թե պ/// խազն] թե պարք է դարախազն

84 ԲՏ₂ ազգացի

85 Մ ասպունակի (վրէ՛պ)

86 Ա ա///, Գ > ասպունակի կամ ճպռան (պեղը բաց՝ չգրած) Տ₁ ասա [դու ինձ դիմադրութեամբ]] ասպունակի
կամ ճպռան (Տ₁ ծնթ. «յորին խանգարեալ է»)

Երաժիշտք են եւ նոքա, բայց ցանկացան անապատի,
 դաշնականացն⁸⁷ նուագաւք զբացավայրսն զարդարեն⁸⁸,
 սակաւուց եղեւ լսել⁸⁹ զբարեձայն երգատրութիւնսն,
 գովեցան եւ գգուեցան՝ յորոց լուան զքաղցրավանդսն:
 Ամփիոն այր Թեբացի եւ Արիոն⁹⁰ Միթեմնացի,
 Որփեւս⁹¹ Թրակացի՝ այս երաժիշտք են մեծագոյն⁹²,
 այլ նուագեալ են առ նոքաւք, որք բնականաւ են պաճուճեալք,
 զի գործի այսր արուեստի նոքա չունին ի բնութենէ:
 Մի եւ դո՛ւ ես յայնցանէ, զորոց լուար զպատմութիւնն⁹³,
 Համարուեստ եւ անուանի՝ որպէս արդիւնքն վկայեն,
 բայց միո՛վ ես պակասեալ՝ զի չսիրեցեր զընդ նոսա կեալ⁹⁴,
 եւ չարարեր անդ քեզ դադարս, ուր եւ նոքա են տաւաղեալ⁹⁵:
 Աստ գաս նստիս մերձ առ ինեւ՝ իբր արուեստիւ ինձ յանգակից,
 բազմաղեաւ երգարանաւ եղանակես եւ կաքաւես
 Հոմերական տաղիցն⁹⁶ չափ⁹⁷. եւ⁹⁸ ծանուցեալ լինի բազմաց
 ոտանաւոր⁹⁹ եւ ցուցական՝ ըստ քերթողացն¹⁰⁰ տեսակի,
 կամ թէ եւս առաւելագոյն¹⁰¹, որպէս թուի ինձ՝ գիտողիս,
 զի վարժումն եւ կրթութիւն ոչ ժամանէ մերձ¹⁰² առ բնութիւն: ¹⁰³

ՀԱԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԷ ԱՄԲԱՍՏԱՆԱԲԱՐ ԱՌ ՎԱՐԴԱՊԵՏՆ.

Դարձաւ պատասխանեաց բոլոր բանիցս ասացելոցս¹⁰⁴,
 յերագագոյն¹⁰⁵ քան զոր լուան¹⁰⁶ ապաբանեաց Հագներգութեամբ.
 Ծանոյց ինձ Հաւաստեաւ կորովակի արտադրութեամբ
 զիմաստս խորհրդոց մեզ ընդ միմեանս բնակութեան:

87 ԲՄ դաշնակացըն

88 Ա զարդար/// (Տ₁ զարդարեն)

89 ԱԳ լսող, ԲՏ₁ լսել (Տ₁ ծնթ. յորինակին՝լսող)

90 ԱԳ անփիոն այր թեմնացի եւ արիւն (Գ արիւն), Տ₁ Տ₂ ամփիոն (Բ անփիոն) այր թեբացի եւ արիւն

91 ԱԳ որբեւս, Բ որփեւս, Տ₁ Տ₂ որփեւս

92 ԲՏ₂ մեծագոյն

93 Գ զպատմութիւն

94 ԲՏ₂ կեալն

95 ԲՏ₂ նոքայն (Տ₂ նոքա) փաղաւարին (ԱՏ₁ նոքա եւ փաղաղեալ), Գ փա աղեալ] փաղաղեալ

96 Բ հոմերական փաղիցըս

97 Տ₂ փաղիցս չափք

98 Տ₁ բեւ, Տ₁ ծնթ. «յորին. եւ» (ԱԲԳՏ₂ եւ)

99 ԱԳՏ₁ յորանաւոր

100 ԲՏ₂ քերթողացըն

101 Գ աւելագոյն

102 Մ > մերձ

103 Բ > այս փեղից յեւրոյ՝ ցվերջ

104 Տ₁ Տ₂ Մ ասացելոց

105 ԳՏ₁ Մ երագագոյն

106 Գ լուան

Ասէ. Զե՛ս արդարախաւս, ամբաստանո՛ղդ¹⁰⁷ զմէնջ բանիւք.
տարապարտ տրանջեցեր՝ յորս ես ոչ եմ պարտաւոր.
լո՛ւր եւ դու իմոց բանից, իրաւախաւս¹⁰⁸ դատեցելոյս,
իմ եւ մեր¹⁰⁹ է այս աշխարհս¹¹⁰, յորում եւ դուք էք պանդխտեալ,
ընտանի եւ սեփհական¹¹¹ ըստ որում էրն բնակուծիւն,
ի յարարէին մեզ աւանդեալ տեղի ուսման եւ աճեցման
յարմարական մեզ առ ի պէտս՝ որպէս ունիմք զկազմութիւն:
Դուք զձերն տուծեցայք՝ վասն յանցման առ արարչին,
աստուածութեանն ցանկացայք, զոր ունէիք՝ զայն կորուսէք.
յերկինս ելանելով՝ մերձ առ դժոխս սողացէք,
ձեռնարկելով առ ճոխանալ՝ աղքատացաք եւ տնանդացաք¹¹²,
առ գերակայն ամբառնալով՝ կործանեցայք ի ստորին վայրս,
առ մեծ փառս դիմեցմամբ՝ վերջոտնեցայք աստ մաւտ¹¹³ առ մեզ:
Զարարչին բան մոռացայք¹¹⁴, եւ բանսարկուին հաւանեցայք,
օրինակաւք¹¹⁵ անաւրինեալք¹¹⁶ եւ անիծիւք դատապարտեալք,
յանմեղուծեան անդ ոչ կացեալք, անթիւ հարեաց եղէք պահակք,
զարդարութիւնն¹¹⁷ կորուսեալք՝ յոքունց մեղաց եղէք գտիչք:
Տեարքդ ծառայք ախտից գտայք՝ հաւանութեամբ մարդասպանին.
Ծառայքս ի ձէնջ ապստամբեալ՝ որպէս եւ դուք ի Տեառնէն,
փուշ եւ տատասկ ձեզ փոխարէն, զի չսիրեցէք զփափկութիւնն¹¹⁸,
մահու վճիռ ձեզ հատուցանումն¹¹⁹, զի չախորժեցէք¹²⁰ զկեանս անեղծ:
Թշնամութիւն առ սիրեցեալն ստամբակացդ առ սիրուն¹²¹ հայրն.
անդրադարձիլ ձեզ առ երկիրն՝ ապականիչքդ պատկերին,
կերակուր ձեզ ի վայրէ՝ որպէս եւ մեզ երկրակեցացս,
անասնականս պարենիկ¹²² չիմացողացդ զվայելուէն,
ընդ մեզ կենակցութիւն՝ ձեզ չընտրողացդ առ¹²³ Աստուածն,

107 Ա ամբաստանողդ

108 Ա //խս, Գ իրաւախս (Տ₁ խրդարախս, Տ₂ արդարախս)109 Տ₁Տ₂Մ ձեր] մեր՝ԱԲԳ «ամեր» ընթերցումը խնասարդ հիմնովին փոխում է)110 ԳՏ₁Տ₂Մ աշխարհ111 Տ₁Տ₂ սեպիական112 Տ₁Տ₂Մ աղքատացայք եւ փնանգացայք113 Տ₁Տ₂Մ > մաւր

114 Գ մոռացաք

115 Տ₁Տ₂ օրինօք, Տ₁ ծնթ. «յօրինէ՛ օրինակօք»

116 Գ արփնեալք

117 Գ զարդարութիւն

118 Գ զփափկութիւն

119 Մ հարուցումն (վրէպ)

120 Տ₁Տ₂Մ չախորժէք

121 Գ սիրոյն

122 Ա անասնականս պարենիկ, Գ անասնական ասպարենիկ

123 Գ զառ

առ ծառայա անգուգուլթիւն՝ զանգուգուլթիւն մեծարողացդ,
բայց եւ անմեղքս¹²⁴ վնասեցաք վասն ձերոյդ ժպրհութեան:
Ի փառս ձեր մեք գոյացեալք եւ վասն ձեր ապականեալք՝
ոչ միայն մահուամբ, այլ եւ սաստիկ գանարբութեամբ,
ընդ¹²⁵ ընկալողացդ¹²⁶ զՏեառն կամս չընկալողքս զգիտութիւն,
ընդ ազատ կամաց ունողսդ հետեւեալքս ըստ բնութեան,
ընդ մտաւորսդ եւ բանաւորս անբանութեամբ պարաւանդեալքս:
Արդ, մեզ եւ ձեզ առ հասարակ եղէք գտիչք կորստեան,
զի եւ ընդ մեր իսկ տուգանաց պարտիք համար տալ արարչին:
Եւ աղէտք վշտագինք պարապատեն զմեզ յերկրի,
խորշակք եւ ձմերուկք եւ պիտոյից պակասութիւնք,
ցաւք եւ խաւթութիւնք եւ տարաժամ մահու արկուածք,
որք յաւելան վասն մեղաց, զի տանջեսցեն¹²⁷ զստահակողսն¹²⁸:
Յորս աւելի մեք աշխատիմք՝ ոչ ունելով յարկս եւ քաղաքս,
ո՛չ համբարս մթերեալս՝ ի լիութիւն հարկաւորացն,
ո՛չ դեղս եւ ո՛չ բժիշկս, որով ցաւոց ախտ դադարէ,
ո՛չ կակուղ ինչ կերակրիկ՝ մեզ ի սփոփանս դիւրութեան.
Եւ ի վերայ ամենայնի՝ մեաւք կերակրիք¹²⁹ որպէս հատիւ.
Ի միմեանց եւս ծախիմք՝ որպէս գիտէք եւ տեսանէք:
Արդ, եթէ այսքանեաւք մեղաւք՝ զորս թուեցաքդ վերագոյն¹³⁰
զրկեցայք դուք ի կենաց եւ յընտանի բնակութենէ,
մեզ զի՞նք մեղադիր, որ չզրկեցաք զոք ի տեղուոյ,
ոչ անցաք զսահմանաւ, զոր աւանդեաց մեզ արարիչն.
զրկումն մեր ի ձէնջ, եւ դո՞ւք զմէնջ ամբաստանէք.
Իրաւամբք դատեցարուք՝ ըստ հրամանի¹³¹ ստեղծողին¹³²:

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՅՈՒՆՑ ԲԱՆԻՑ ԵՒ ԶՊԱՐՏՈՒԹԻՒՆ
ԽՈՍՏՈՎԱՆԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ.

Ժշմարտիւ զայս խաւսեցաւ ըստ պատահմանցն հանդիպման,
զբացատրեալ հոյլս բանից իմաստաբար բարբառելով,
որով յաղթեալ մեզ իմաստնոցս եւ կարծեցեալ բանաստեղծացս,
Լուութեամբ յանդիմանեալ, ո՛չ կարաւտեալ երկար բանից:

124 Ա անմեղաց (Գ անմեղքս, S₁S₂Մ անմեղքս)

125 S₁S₂ նդ] ընդ

126 Գ ընկալողացդ

127 S₂ փանջեսցին

128 Գ գսփախակողս

129 S₁S₂ կերակրիմք

130 S₁S₂ վերագոյնդ

131 Գ հրաման մեր ի

132 Ա սրեղծողին, Գ սրեղծաղին

РЕЗЮМЕ

Текст поэмы “Слово мудрости” знаменитого армянского литератора и мыслителя средневековья Иоанна вардапета (архимандрита) Саркавага (XI-XII вв.) впервые был издан в 1847 г. Гевондом Алишаном на основе одной недатированной рукописи. Второе издание этого текста осуществил историк Ашот Абрамян в 1956 г., дополнив предыдущее издание данными второй рукописи XVII в., хранившейся в Бзоммарском монастыре (Ливан). В 1980 г. на основе этого же рукописного материала известный филолог Асатур Мнацаканян составил критический текст поэмы, который, к сожалению, из-за смерти автора не был опубликован.

Новый критический текст поэмы “Слово мудрости”, представленный в настоящей публикации, создан на основе названных рукописей и публикаций, проведено также сравнение с третьей рукописью, написанной в 1619 г. в Луцке (Польша) и хранящейся в Ерусалимском армянском монастыре Святых Яковов, с учетом фона комплексного изучения всего рукописного материала. В нем откорректированы и уточнены многие погрешности и темные места вышеуказанных изданий.

SUMMARY

The poem “Word of Wisdom” of the famous medieval Armenian philosopher and thinker Hovhanness Sarkavag (11-12 cc.) was for the first time published in 1847, by Gh. Ališan, on the evidence of an undated manuscript. For the second edition of the poem in 1956 A. Abrahamian, using already published text, corrected it by the 17th century manuscript of the monastery of Bzommar (Lebanon), which had some textual lacunes, as well. On the basis of that manuscript data the philologist A. Mnacakanian prepared the critical text of the poem in 1980, unfortunately unpublished till nowadays, by the death of philologist.

In the present publication the new critical apparatus of the poem is presented, adding to the previous manuscripts the text of the Jerusalem manuscript (1619, Lutsk, Poland). In this new edition of the poem some lacunes and misunderstandings of the previous editions have been clarified and corrected.